



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՈՒՐԵՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆԻ**

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Սուրենավան համայնք
Էլ.փոստ՝ surensavan.ararat@mta.gov.am հեռ.055-53-53-54

ՈՐՈՇՈՒՄ

<<04>> ՀՈՒԼԻՍԻ 2018 ԹՎԱԿԱՆ ԹԻՎ 16

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՍՈՒՐԵՆԱՎԱՆ
ՀԱՄԱՅՆՔԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 04-Ի ԹԻՎ 04 ԱՎԱԳԱՆՈՒ ՆԻՍՏԻ
ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով <<Տեղական Ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության 14-րդ հոդվածի 6-րդ կետի դրույթներով ավագանին որոշեց.

Հաստատել Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Սուրենավան համայնքի 2018 թվականի հուլիսի 04-ի թիվ 04 նիստի օրակարգը հետևյալ քննարկվող հարցերով :

1. Սուրենավան համայնքի համայնքային սեփականություն հանդիսացող 9.6 հա և 2.0971 հա հողամասերի նպատակային և գործառնական նշանակությունը փոփոխելու մասին:
2. Սուրենավան համայնքի համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերը առանձնացնելու և վարձակալության հիմունքներով տրամադրելու մասին:

	Կողմ- 6	դեմ-0	ձեռնպահ -0
Հ.Աբրահամյան			
Գ.Գրիգորյան			
Պ.Ադամյան			
Կ. Մարտիրոսյան			
Վ. Ղազարյան			
Լ.Նադարյան			
Համայնքի ղեկավար		Կ. Կարապետյան	



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՈՒՐԵՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Սուրենավան համայնք
Էլ.փոստ՝ surensavan.ararat@mta.gov.am հեռ.055-53-53-54

ՈՐՈՇՈՒՄ

<<04>> ՀՈՒԼԻՄԻ 2018 ԹՎԱԿԱՆ ԹԻՎ 17

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՍՈՒՐԵՆԱՎԱՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՄԱՑՈՂ 2.0971 ԵՎ
9.6 ՀԱ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԵՎ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ
ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով << Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի
Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 29 կետով ,Հայաստանի Հանրապետության
կառավարության 29.12.2011թ-ի
<<Հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների համաձայնեցման
միջգերատեսչական հանձնաժողովի 01.06.2018 թ-ի թիվ 113 դրական եզրակացությունը
ավագանին որոշեց.

- 1.Համայնքի վարչական սահմաններում ընդգրկված ,Սուրենավան համայնքի
համայնքային սեփականություն հանդիսացող ընդհամենը՝ 9.6 հա , որից կադաստրային
0147-0001 ծածկագրի տակ գտնվող 6.97 հա և 0115-0001 ծածկագրի տակ գտնվող 2.63 հա
արդյունաբերական ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության
օբյեկտների հողերի կատեգորիայի ընդերքօգտագործման գործառնական նշանակության
հողամասերի նպատակային
նշանակությունը փոփոխել և դասել գյուղատնտեսական նշանակության հողամասերի
կատեգորիա՝ վարելահողերի դասին:
2. Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Սուրենավան համայնքի վարչական
տարածքում ընդգրկված <<ՄԱՆԱՆԱ ԳՐԵՅՆ >> ՄՊԸ –ին վարձակալության
իրավունքով տրամադրված համայնքային սեփականության հանդիսացող
գյուղատնտեսական նշանակության՝ կադաստրային 0195-0002 ծածկագրի տակ
հաշվառված 1.4964 հա վարելահողում և 0795 -0001 ծածկագրի տակ հաշվառված 0.6007
հա այլ հողատեսքի նպատակային նշանակությունը փոփոխել և դասել
արդյունաբերական ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության
օբյեկտների հողերի կատեգորիա՝ արդյունաբերական օբյեկտների գործառնական
նշանակության հողամասերի դասին:

Կողմ- 6

դեմ-0

ձեռնպահ -0

Հ.Աբրահամյան

Գ.Գրիգորյան

Պ.Ադամյան

Կ. Մարտիրոսյան

Վ. Ղազարյան

Լ.Նադարյան

Համայնքի ղեկավար՝

Կ. Կարապետյան



Լ.Նադարյան

Համայնքի ղեկավար



Կ. Կարապետյան